ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 փետրվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

15
(2865)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու մի շարք անդամներ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոններ են զբաղեցնում: Այսպես՝

1. ավագանու իշխանական անդամ Վլադիմիր Կիրակոսյանը համատեղությամբ նաեւ Անտառային կոմիտեի նախագահն է,

2. Նատալյա Սինորյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականն էր, իսկ հիմա՝ ՔՊ խմբակցության փորձագետը,

3. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ավագանու անդամ Արման Բարխուդարյանը ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն է,

4. Ջինա Չալիկյանը ԱԺ նախագահի ռեֆերենտն է, կամ Լեւոն Լեւոնյանը, որը նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականն է:

Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից մինչեւ փետրվարի 15-ը ժամանակ են տվել իշխանական ավագանու անդամներին. նրանք կամ ավագանու մանդատից պետք է հրաժարվեն, կամ իրենց զբաղեցրած հանրային պաշտոններից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ավագանու ՔՊ խմբակցության անդամ Նատալի Սինորյանը, որը համատեղությամբ նաեւ ԱԺ ՔՊ խմբակցության փորձագետի պաշտոնն է զբաղեցնում, ասաց, որ նախընտրում է ավագանու անդամի մանդատը:

«Դեռ իրավական որոշակի գործընթաց պետք է լինի, կհասկանանք՝ ինչ է լինում, բայց, ամեն դեպքում, ես որոշում կայացնելու եմ եւ ընտրելու եմ ավագանու անդամի մանդատ եւ իմ գործունեությունը շարունակելու եմ ավագանու մանդատից, կհրաժարվեմ ՔՊ խմբակցության փորձագետի պաշտոնից»,-ասաց նա:

Համատեղությամբ ԱԺ աշխատակազմի ղեկավարի օգնականի պաշտոնը զբաղեցնող ՔՊ-ական ավագանու անդամ Լեւոն Լեւոնյանը նույնպես մեզ հետ զրույցում ասաց՝ ընտրում է ավագանին. «Ես ավագանու անդամի մանդատից չեմ հրաժարվի, կհրաժարվեմ ԱԺ-ում զբաղեցրած իմ պաշտոնից:

Ամսի 15-ը վերջնաժամկետն է. եթե ինչ-որ փոփոխություն չլինի, ես միանշանակ այդ բացը կլրացնեմ ու որոշում կկայացնեմ. ամեն դեպքում, ընտրելու եմ ավագանու անդամի մանդատը»:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը գործուղվելու է Հունգարիա: Գործուղումը տեւելու է 2 օր՝ 2024 թվականի փետրվարի 5-7-ը: Բուդապեշտ այցի նպատակն է երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր քննարկելը: Նախարար Անահիտ Ավանեսյանի այցին զուգահեռ, Բուդապեշտում էր նաեւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: ՀՀ նախագահի այցին ի պատիվ պաշտոնական ճաշ է տրվել, ինչել են բաժակաճառեր, բարձր են գնահատվել երկկողմ հարաբերություններն ու բարձր մակարդակի փոխգործակցությունը: Հիշեցնենք, որ Հունգարիայի եւ Հայաստանի հարաբերությունները, որոնք 2004 թվականի փետրվարից խզվել էին, վերականգնվեցին հեղափոխական իշխանությունների օրոք՝ 2023 թվականի մայիսին: Իսկ ինչո՞ւ էին սրվել. 2004-ի փետրվարին Ռամիլ Սաֆարովը դաժանորեն կացնահարեց 26-ամյա հայ սպա Գուրգեն Մարգարյանին, որը քնած էր: Սպանությունը կատարվել էր Բուդապեշտում. Մարգարյանը եւ Սաֆարովը ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անգլերենի դասընթացների էին մասնակցում Հունգարիայի ազգային պաշտպանության համալսարանում: Դեպքից հետո Հունգարիան արտահանձնեց հանցագործին Ադրբեջան, որտեղ նա հերոսի կոչում ստացավ: Այս հայտնի դեպքերից հետո Հայաստանում չկար նույնիսկ Հունգարիայի դեսպանատուն, իսկ նոր իշխանության օրոք այն վերաբացվեց, եւ սկսվեց քաղաքական ջերմ հարաբերությունների մի նոր էտապ: Ներկայիս իշխանությունը կարծես մոռացել է, թե ինչու Հայաստանը այն ժամանակ հրաժարվեց այդ հարաբերություններից, իսկ այժմ Եվրոպային քծնելու համար պղծվում են բոլոր հիշողությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգը, ամենայն հավանականությամբ, ՔՊ-ական պատգամավորների միջնորդությունը չի բավարարի, քանի որ գործով կալանավորվածները հրաժարվում են ցուցմունք տալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները կրկին քրեակատարողական հիմնարկից էկոնոմիկայի փոխնախարար Անի Իսպիրյանին կտանեն կոմիտե՝ հարցաքննության, ու այդ հարցաքննությունից ու ցուցմունքից էլ կախված է գործի ելքը, թե փոխնախարարը կտա անուններ, թե ոչ: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցությունն այսօր առավոտյան ներկայացրել է էկոնոմիկայի նախարարության աղմկահարույց բացահայտումների գործով կալանավորվածներին ազատ արձակելու երաշխավորությունը: ArmLur.am-ը երեկ գրել էր՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները պատրաստվում են երաշխավորություն ներկայացնել խորհրդարանի նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր՝ Կառլեն Սիմոնյանի կնոջ՝ Անի Գեւորգյանի, «Սիներջի» ընկերության բիզնեսի զարգացման կառավարիչ Լիլի Մկրյանի եւ ընկերության տնօրեն Աշոտ Հովհաննիսյանի մասով: Իշխանականները երեկվանից ստորագրահավաք են սկսել, որպեսզի երաշխավորություն ներկայացվի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ երեկ՝ մինչեւ ուշ ժամը, ստորագրությունը շարունակվել է, 71-հոգանոց ՔՊ ֆրակցիայից 5 հոգի չեն միացել քվեարկությանը. նրանցից մի քանիսը վատառողջ են եղել, իսկ երկուսը՝ Արսեն Թորոսյանն ու Հռիփսիմե Գրիգորյանն էլ գտնվում են գործուղման մեջ:

Մութ ամպեր՝ «Ոսկու աշխարհ»-ի սեփականատեր Վաղարշ Աբրահամյանի գլխին: Վերջինիս պատկանող «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» ՍՊԸ-ն դատարանի դռներն է ընկել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ոսկու շուկայի սեփականատերը դատի է տվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնին: Իսկ ի՞նչն է պատճառը: 2023 թվականին պարզվել էր, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2023 թվականի հունվարի 25-ի հանձնարարագրի հիման վրա՝ տեսչական մարմնի մասնագետների կողմից հրդեհատեխնիկական հետազոտություն է իրականացվել ՀՀ, ք. Երեւան, Մ. Խորենացու փողոց 24 հասցեում գտնվող «Վաղարշ եւ Որդիներ կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում: «Հրդեհատեխնիկական հետազոտության արդյունքում 2023 թվականի փետրվարի 6-ին կազմվել է արձանագրություն, եւ վարչական վարույթում առկա նյութերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ ընկերության կողմից ՀՀ, ք. Երեւան, Մ. Խորենացու փողոց 24 հասցեում գտնվող շենքերը եւ շինությունները շահագործվում են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների բազմաթիվ թերություններով եւ խախտումներով, որոնք էլ կարող են անմիջականորեն եւ ուղղակի սպառնալիք ստեղծել հրդեհների առաջացման եւ մարդկանց անվտանգության համար: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարը որոշում է կայացրել ամբողջությամբ դադարեցնել ՀՀ, քաղաք Երեւան, Մ. Խորենացու փողոց 24 հասցեում գործող «Վաղարշ եւ Որդիներ կոնցեռն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատանքները»,- ասվել էր հաղորդագրությունում:



ԶՐՈՒՅՑ

«ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ Է, ՇՏԱՊԵԼ ՉԻ ՍԻՐՈՒՄ»

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը երեկ զրկվեց ավագանու մանդատից: Ավելի ուշ Հայկ Մարությանը հայտարարեց, որ շարունակելու է մնալ քաղաքականությունում, ավելին՝ նոր կուսակցություն է հիմնելու, որպեսզի 2026թ.-ին մասնակցի խորհրդարանական ընտրություններին: Հարցի շուրջ ArmLur.am-ը մի քանի հարց է ուղղել Հայկ Մարությանին:

-Պարոն Մարության, ինչպե՞ս նոր կուսակցություն հիմնելու որոշում կայացրիք, քննարկումներն արդեն սկսվե՞լ են:

-Քննարկումներ, այո՛, արդեն սկսվել են. երբ արդեն ամեն բան վերջնական լինի, հանրությանը կհայտնենք: Սա նաեւ գաղափարական աշխատանք է, շտապել չի սիրում:

-Ովքե՞ր են լինելու կուսակցությունում: Կա՞ն հանրային, քաղաքական դեմքեր, որոնք ընդգրկված կլինեն ձեր թիմում:

-Մեր աջակիցները, ովքեր մեզ պես են մտածում եւ ուզում են, որ Հայաստանը զարգանա, Երեւանը զարգանա: Բնականաբար, լինելու են մարդիկ նաեւ, որոնց հանրությունը ճանաչում է, կլինեն նաեւ արժանավոր մարդիկ, որոնց հանրությունը չի ճանաչում, ինչպես բոլոր կուսակցություններում:

-Պարոն Մարության, Դուք 2018թ.-ի հեղափոխության ժամանակ, կարելի է ասել, առաջամարտիկն էիք, ու աջակցում էիք Նիկոլ Փաշինյանին: Հիմա, տեսնելով իրավիճակը՝ հայրենիքի կորուստ ու այս իշխանությունների մյուս ձախողումները, չե՞ք զղջում, որ աջակցել եք նրանց:

-Ես ասել եմ՝ հին իշխանություններն ամենաուժեղ հեղափոխականներն էին. այնպես արեցին, որ մարդիկ այնքան չսիրեն իրենց, որ իրենց դեմ դուրս գան. այդ պրոցեսը կանգնեցնել հնարավոր չէր: Ես երկար տարիներ պայքարում էի այդ իշխանությունների դեմ, ես ինքս մասնակցել եմ ակցիաներին ու բոլոր ընդվզումներին մասնակցել եմ, ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց, ու, ի վերջո, դա ստացվեց: Չգիտենք, որ կգա իշխանությունը, որը կանի այն նույն սխալները, որոնք նախկին իշխանություններն էին թույլ տալիս:

-Պարոն Մարության, ավագանու ընտրություններին մասնակցելիս հայտարարում էիք, որ ձեր օրակարգն ամբողջական իշխանափոխությունն է: Ինչպե՞ս եք դա անելու, հնարավո՞ր է՝ մի օր էլ Դուք փողոց դուրս գաք իշխանափոխության պահանջով:

-Յուրաքանչյուր ընդդիմություն ստեղծվում է իշխանափոխության համար, այնպես որ, ոչինչ չի բացառվում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՎԱՆԴԱՊԱՀԻՆ ՉԻ ԾԱՆՈՒՑՎԵԼ

Ալմա-Աթայի 1991 թվականի հռչակագիրը ստորագրելու պահին Հայաստանի խորհրդարանի կողմից արված վերապահումները չեն ներկայացվել ավանդապահին, հետեւաբար միջազգային իրավահարաբերությունների տեսանկյունից որեւէ ուժ չունեն: Այս մասին ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանին: «Միջազգային եւ տեղական օրենսդրության համաձայն՝ երբ մի երկիր վերապահում է անում, այդ վերապահումը, նաեւ Վիեննայի կոնվենցիայի համաձայն, պետք է ծանուցվի ավանդապահին: Մենք շատ վաղուցվանից հետազոտում ենք այդ հարցը եւ արձանագրում ենք, որ ՀՀ-ն ավանդապահին չի ծանուցել դրա մասին: Հետեւաբար, միջազգային իրավահարաբերությունների տեսակետից այդ վերապահումները որեւէ իրավական ուժ չունեն»,-մանրամասնել է Փաշինյանը՝ հավելելով, որ այդ փաստն իր հանձնարարականով մի քանի անգամ ստուգվել եւ վերստուգվել է:

«Ալմա-Աթայի 1991 թվականի հռչակագիրն այդ վավերացման եւ հետագա չծանուցման փաստով հստակ եւ աներկբա արձանագրել է, թե որն է ՀՀ տարածքային ամբողջականությունը»,-պարզաբանել է վարչապետը:

«ՈՉ ՄԻ ԸՆՏՐԱԿԵՂԾԻՔ ՉԻ ԵՂԵԼ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցնում է, որ հնարավոր նոր Սահմանադրության ընդունման նպատակը Սահմանադրությունն իշխող քաղաքական ուժին, այդ ուժի ղեկավարին հարմարեցնելը չէ: Փաշինյանն այս մասին ասաց ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանին՝ անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից Սոնա Ղազարյանի՝ հնարավոր Չորրորդ Հանրապետության ստեղծման վերաբերյալ քննարկումների մասին հարցին:

«Ես, Չորրորդ Հանրապետություն ասելով, ի՞նչ ի նկատի ունեմ. ներքին իմաստով նկատի ունեմ ընդունված նոր Սահմանադրություն, ոչ թե Սահմանադրության փոփոխություն, որն ընդունվել է ժողովրդի կողմից, եւ բոլորը, նույնիսկ նրանք, որոնք դեմ են քվեարկել, ընդունում են, որ մեծամասնությունը կողմ է քվեարկել»,-ասաց վարչապետը: Փաշինյանը շեշտեց, որ իրենց կառավարման օրոք Հայաստանում ոչ մի մակարդակում ոչ մի ընտրակեղծիք չի եղել եւ չի կարող լինել: «Եթե անկեղծ ասեմ՝ կառավարությունը, կառավարող քաղաքական ուժը չունի սեղանին դնելու փաթեթ, որ ասի՝ սա է առաջարկում: Եվ դա վատ չէ, ընդհակառակը՝ լավ է. նախ հանրության մեջ պետք է տեղի ունենա քննարկում, թե դա ինչի մասին է, ինչի համար է»,-նշեց նա՝ կարեւորելով, որ խոսակցություն տեղի ունենա, ըմբռնում ձեւավորվի, որ դա կարեւոր է, պետք է անել, հետո նոր անցնել կոնկրետ բովանդակությանը: Վարչապետը հավելեց՝ ավանդույթ կա, երբ սահմանադրությունները հարմարեցրել են կամ գործող կառավարությանը, կամ գործող կառավարության ղեկավարին: «Մեր մտադրություններն այդպիսին չեն եւ չեն կարող լինել, քանի որ դրա անհրաժեշտությունն ուղղակի չկա»,-նշեց Փաշինյանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարին հայտարարել էր, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է ունենա Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ եւ ավելի կենսունակ է դարձնում աշխարհաքաղաքական եւ ռեգիոնալ նոր պայմաններում: Ավելի ուշ հարցազրույցում, անդրադառնալով հարցին, թե ինքը նոր Սահմանադրություն առաջարկում է նոր՝ Չորրորդ հանրապետության համար՝ վարչապետը պատասխանել էր, որ դա գաղափարներից մեկն է:

ԶՐԿՎԵՑԻՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ

Երեկ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն» խմբակցությունների ձեռամբ, ինչպես նաեւ ավագանիում փոքրամասնություն կազմող՝ ՔՊ կցորդ դարձած «Հանրային ձայն»-ի աջակցությամբ՝ ավագանու երեք ընդդիմադիր անդամներ՝ նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, «Մայր Հայաստան» խմբակցությունից Սոնա Աղեկյանն ու Նարինե Հայրապետյանը, զրկվեցին ավագանու անդամի մանդատներից:

Օրակարգում նախապես ավագանու 5 անդամներին մանդատից զրկելու հարց էր դրված, սակայն Զարուհի Փոստանջյանին ու Գեւորգ Ստեփանյանին մանդատից զրկելու համար իշխանության ձայները չբավականացրին. նրանք կպահպանեն մանդատները:

Իսկ ովքե՞ր են փոխարինելու ավագանու՝ մանդատից զրկված անդամներին:

«Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ Մարությանի փոխարեն ավագանու անդամ կդառնա «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամ Արամ Մանուկյանը. վերջինս անհատ ձեռներեց է:

«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանն էլ մեզ փոխանցեց, որ պատրաստվում են վիճարկել ավագանու որոշումը, դիմելու են դատարան, ուստի նման հարց՝ ում են անցնելու Սոնա Աղեկյանի ու Նարինե Հայրապետյանի մանդատները, դեռ չեն քննարկել:

Թե երբ են պատրաստվում վիճարկել որոշումը, Մանուկ Սուքիասյանն ասաց. «Մեր իրավաբաններն այդ հարցով են զբաղվում, սեղմ ժամկետում կդիմենք դատարան»:

ԱԺ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Տարին նոր է սկսվել, իսկ ՀՀ Ազգային ժողովի ավտոմեքենաներն արդեն ենթակա են վերանորոգման:

Բանն այն է, որ Ազգային ժողովը 2024 թվականի հունվարի 24-ին ԱԺ սպասարկող ավտոմեքենաների վերանորոգման համար հատկացրել է 14 մլն 500 հազար դրամ: Հիշեցնենք, որ նախկինում գրել էինք՝ ԱԺ մեքենաների ապահովագրման համար բյուջեից ծախվել է գրեթե 4 մլն դրամ: Ավտոմեքենաների վերանորոգման համար կնքվել է պայմանագիր «ՋԻ ԸՆԴ ՋԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի հետ, որի տնօրենն է ոմն Արայիկ Ստեփանյան:

Պայմանագրով փոխվելու եւ կապիտալ վերանորոգվելու են ԱԺ մեքենաների շարժիչներից մինչեւ սրահ բոլոր դետալները: Պայմանագրով մատուցվելու է 416 անուն ծառայություն:

Պայմանագրում նախատեսված պայմաններից են, որ սպասարկման մեքենաների թիվը միանգամից կարող է լինել 3-ը, որոնց պետք է պահել տանիքածածկ եւ հսկվող տարածքում: Պայմանագրով նախատեսված է, որպես սպասարկող ընկերություն, ունենալ դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման համար անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում՝ նաեւ այլումինի եւ չուգունի, ներկման, չորացման եւ հարդարման ժամանակակից միջոցներ:

Ըստ պայմանագրի՝ բոլոր ծառայությունները պետք է իրականացվեն Երեւան քաղաքի վարչական շրջանում սպասարկման արագությունն ապահովելու նպատակով:

«ՄՄԽԵԼ ԵՔ ՎԱՐԿԱՆԻՇԸ»

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի կարծիքով՝ «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը բավարար ձայներ չի հավաքի եւ խորհրդարանում ներկայացվածություն չի ունենա, եթե լինեն նոր ընտրություններ:

Սիմոնյանը նման դիրքորոշում հայտնեց ԱԺ ամբիոնից՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի ելույթին, որով վերջինս իշխանություններին քննադատում էր ՀՅԴ-ին տարբեր մեղադրանքներ ներկայացնելու համար:

Սիմոնյանը նշեց, որ ինքը հարգանքով է վերաբերվում ՀՅԴ-ին, դաշնակցական բազմաթիվ ընկերներ ունի թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս: «Բայց դուք եք մսխել Դաշնակցության վարկանիշը: Ի՞նչ եք արել վերջին 30 տարիների ընթացքում Դաշնակցության վարկանիշի հետ: Ո՞նց ստացվեց այնպես, որ այս գումարման ԱԺ-ի Դաշնակցության կազմն ամենամեծն է, այն էլ՝ պատերազմից հետո տեղի ունեցած արտահերթ ընտրություններից հետո դաշինքի միջոցով: Ո՞նց էր ստացվում, որ Դաշնակցությունն 90-ականներից գնալով մսխեց իր ունեցածը. ձեր գործունեությամբ. վերահիմաստավորեք, քննարկենք Մարտի 1-ից հետո Դաշնակցության պահվածքը՝ բոլոր կառավարությունների հետ կոալիցիա կազմելը, պաշտոններ վերցնելը»,-ասաց նա:

ԱԺ նախագահը նշեց, որ Լեռնային Ղարաբաղում եւս Դաշնակցությունն իշխանություն էր վերցրել, դրանից որոշ ժամանակ անց ի հայտ եկավ ԼՂ-ի լուծարման մասին փաստաթուղթը:

«Մինչեւ այն պահը, որ դուք՝ «Հայաստան» դաշինքը, չգա, չկանգնի ու չասի, որ, այո, արել ենք Մարտի 1, կեղծել ենք ընտրություններ եւ այլն, եւ պատասխանը չստանա, Դաշնակցությունը հաջողության չի հասնելու: Եթե նոր ընտրություններ լինեն, ես չգիտեմ՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը կարող է շատ քիչ ձայն հավաքի, բայց ես վստահ եմ, որ Դաշնակցությունը նույնպես այդ խնդիրն ունենալու է եւ չի անցնելու Ազգային ժողով»,-ասաց Ազգային ժողովի նախագահը:

Գառնիկ Դանիելյանն իր ելույթում, պատասխանելով Դաշնակցության, դաշնակցականների վերաբերյալ ԱԺ ամբիոնից արված հայտարարություններին, խորհուրդ էր տվել իշխանականներին պատմությունն ավելի լավ ուսումնասիրել: «Տարիներ ի վեր, չունենալով պետական միավոր, Դաշնակցությունը 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերից հետո ստեղծել է Հայաստանի Առաջին Հանրապետությունը»,-նշել էր ընդդիմադիր պատգամավորը:

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՉ ՄԻ ԲԱՆ ԱՅԼԵՎՍ ԱՅՆ ՉԷ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցնում է, որ իշխանության՝ Սահմանադրության փոփոխության նպատակը Խաղաղության պայմանագրի ստորագրումն է:

Փաշինյանն այս մասին ասաց ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանին:

Փաշինյանը նկատեց, որ ոմանք զարգացնում են այն թեզը, թե Սահմանադրության փոփոխությունն արվում է Խաղաղության պայմանագրի ստորագրման համար:

«Խաղաղության պայմանագրի ստորագրման առումով, եթե նույնիսկ այդ խնդիրները կան, ապա դրանք լուծված են, որովհետեւ Խաղաղության պայմանագրի տեքստի մեջ կա մի համաձայնեցված հոդված, որտեղ ասվում է, որ կողմերը չեն կարող հղվել իրենց օրենսդրությանը՝ այս պայմանագրով ստանձնած որեւէ պարտավորություն չկատարելու համար: Այստեղ խնդիրը բացարձակապես Խաղաղության պայմանագրի մասին չէ եւ չի կարող լինել»,-ասաց Փաշինյանը:

Վարչապետը նշեց, որ Սահմանադրությունն առաջին հերթին ներքին կյանքի կազմակերպման համար է, սակայն ցանկացած երկրի Սահմանադրություն կարգավորում է նաեւ արտաքին հարաբերությունները: ՀՀ գործող Սահմանադրությունը նաեւ արտաքին հարաբերությունների համար է ուղենիշ պարունակում: «Ցանկացած Սահմանադրություն ունի նաեւ արտաքին ազդեցություններ, բայց այդտեղ կապերը բոլորովին ուրիշ կերպ են աշխատում»,-ասաց Փաշինյանը:

Վարչապետը կարեւորեց, որ ՀՀ-ն պետք է արտաքին աշխարհի հետ իր հարաբերությունների մասին մտածի նոր պայմաններում: «Աշխարհում ոչ մի բան այլեւս այն չէ, ինչ եղել է գործող Սահմանադրության ընդունման պայմաններում, ոչ մի արտաքին հարաբերություն այն չէ»,-ասաց Փաշինյանը՝ հավելելով, որ սա միայն Հայաստանի մասին չէ:

Վարչապետը նկատել է՝ մարդիկ շատ են խոսում այն մասին, որ Հայաստանի ժողովուրդը պետական մտածողությամբ եւ պետական գործելակերպով ժողովուրդ չէ: «Եվ ես այդ մարդկանց լսելով՝ մտածում եմ, թե որտեղ է այն կետը, որտեղ այդ ընկալումը պետք է փոխվի: Իմ ընկալմամբ՝ այդ կետը Սահմանադրության ընդունումն է ազատ կամարտահայտմամբ, որովհետեւ դա նշանակում է, որ երկրի քաղաքացիների մեծամասնությունը ֆիքսում է իր ապրելու կանոնները»,-նշեց նա:

Ըստ վարչապետի՝ մինչեւ հիմա ընդունված ոչ մի Սահմանադրություն չի ընդունվել ժողովրդի ազատ կամարտահայտմամբ, միշտ վերնախավն է պարտադրել, թե ինչպես պետք է ապրի:

«Բայց ամենակարեւոր խնդիրներից մեկն արտաքին միջավայրում ավելի դիմակայուն եւ ավելի պաշտպանված դառնալն է, բայց ինչպե՞ս»,-ասաց վարչապետը:

Փաշինյանը հիշեցրեց, որ անվտանգության բաղադրիչ ապահովելու առումով ինքը շատ է նշել բանակի, արտաքին հարաբերությունների մասին: Բայց երրորդ բաղադրիչի կարիք եւս կա: «Բանակն ու արտաքին հարաբերությունները պետք է սպասարկեն տվյալ պետության լեգիտիմ շահերը, այն պետության, այն տարածքում, որը ճանաչված է միջազգայնորեն: Սա անվտանգության մակարդակը մեկ աստիճան բարձրացնելուն ուղղված քայլ է»,-ասաց վարչապետը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունվարին հայտարարել էր, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է ունենա Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ եւ ավելի կենսունակ է դարձնում աշխարհաքաղաքական եւ ռեգիոնալ նոր պայմաններում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ-ԵՄ

Ի ՇԱՀ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը փետրվարի 7-ին Հապագայում հանդիպում է ունեցել Նիդերլանդների խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Ռայմոնդ դե Ռոնի եւ հանձնաժողովի՝ խորհրդարանի կուսակցությունների մեծամասնությունը ներկայացնող անդամների հետ:

Արարատ Միրզոյանը նշել է՝ Հայաստանն ընթանում է ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհով, որոնց արդյունքում առկա ձեռքբերումներն իրենց արտացոլումն են գտել նաեւ միջազգային համապատասխան ցուցանիշներում:

Անդրադառնալով Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին՝ նախարար Միրզոյանը խորհրդարանականներին է ներկայացրել տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատման հարցում ՀՀ տեսլականն ու այդ ուղղությամբ գործադրած ջանքերը: Նախարարը նշել է, որ ՀՀ կառուցողական մոտեցումները միշտ չէ, որ ստանում են համարժեք արձագանք՝ ընդգծելով Ադրբեջանի կողմից համապատասխան քաղաքական կամքի ու հստակ հանձնառության ցուցաբերման անհրաժեշտությունը: Արարատ Միրզոյանն ընդգծել է Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացում առանցքային սկզբունքները, այդ թվում՝ տարածքային ամբողջականության եւ սահմանների անքակտելիության անվերապահ հարգման կարեւորությունը:

Տարածաշրջանային տրանսպորտային եւ տնտեսական կապուղիների ապաշրջափակման համատեքստում Արարատ Միրզոյանը նշել է, որ ՀՀ կողմից կարեւորվող չորս՝ ինքնիշխանության, իրավազորության, փոխադարձության ու հավասարության սկզբունքներն իրենց լավագույն արտացոլումն են ստացել ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրում, որը ներկայացվել եւ արժանացել է միջազգային գործընկերների ուշադրությանը:

ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը նաեւ պատասխանել է Նիդերլանդների խորհրդարանականների հարցերին՝ տարածաշրջանային զարգացումների, Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտման հետեւանքով բռնի տեղահանված հայերի իրավունքների ու կարիքների հասցեագրման, ՀՀ-ԵՄ գործընկերության ամրապնդման եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ:

Հանդիպմանն ընդգծվել է Հայաստանի եւ Նիդերլանդների միջեւ, այդ թվում՝ խորհրդարանականների մակարդակում, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ ձեւաչափում փոխգործակցության հետագա խորացման պատրաստակամությունը՝ տարածաշրջանում կայունությանն աջակցելու նպատակով եւ ի շահ ՀՀ քաղաքացիների բարեկեցության ապահովման:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ

«ԲՈՄԲ»

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԾԵԾԿՈՏՈՒՔ՝ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Փետրվարի 6-ին վիճաբանություն, ծեծկոտուք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 05:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երեւան-Սեւան ավտոճանապարհի Չայնիի ոլորաների սկզբնամասում գործող «Բոմբ» ակումբում մի խումբ անձանց միջեւ ծեծկոտուք է տեղի ունենում, եւ կան վիրավորներ: Նմանիսիով մեկ այլ տեղեկություն էլ ստացվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնում, որ ծեծկոտուքի մասնակիցները ակումբի սեփականատերերն են եւ նրանց ընկերները:

Ժամը 06:40-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժին կրկին ահազանգ է ստացվել, որ «ձախ նախաբազկի կտրած վերք» ախտորոշմամբ նշված ակումբից իրենց մոտ է տեղափոխվել է Կոտայքի մարզի բնակիչ 30-ամյա Շմավոն Կ.-ն, ինչպես նաեւ շտապօգնության բժիշկները տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել 28-ամյա Զառա Ա.-ին:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված հասցե են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ Ռուբեն Դավթյանը, ոստիկանության Կոտայքի բաժնի պետ Էդմոնդ Այվազյանը եւ նույն բաժնի Քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր Պոլեյանը:

Ոստիկանները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 05:00-ի սահմաններում՝ վերը նշված ակումբում անհիմն ծագած վիճաբանության ժամանակ, Կոտայքի մարզի բնակիչ 31-ամյա Արտյոմ Բ.-ն ծեծի է ենթարկել Զառա Ա.-ին՝ պատճառելով մարմնական վնասվածք, որից հետո վերջինիս ձերբակալելու ժամանակ ընկերը՝ Շմավոն Կ.-ն, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, ձեռքին եղած գարեջրի շիշը կոտրել է եւ ինքնավնասում կատարել:

Դեպքի վայր են ժամանել նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Արտյոմ Բ.-ին ոստիկանները տեղափոխել են ոստիկանության Կոտայքի բաժին, որտեղից էլ ներկայացրել են Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքի վայրում հայտնաբերվել են արնանման հետքեր, մեկնարկային լուսածիր ատրճանակ, գարեջրի շշեր եւ BMW մակնիշի ավտոմեքենա, որը, ըստ տեղեկությունների, կռվի մասնակիցներից մեկինն է:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶՆԱՀՅՈՒՍՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ԵՆ ԳՈՐԾԵԼ

Փետրվարի 6-ին արտակարգ իրավիճակ է ստեղծվել Գեղարքունիքի մարզում: Ժամը 18:10-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի՝ Սեւանի թունելի սկզբնամասում ձնահյուսքի պատճառով ճանապարհի մի զգալի հատված փակվել է:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, տեղում ՊԾ պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Խուդինյանի հանձնարարականով օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Ալբերտ Մարտիրոսյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Բակուր Սարիբեկյանի եւ գումարտակի ծառայության տեսուչ Հրաչյա Գեւորգյանի գլխավորությամբ:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ «Ճանապարհային դեպարտամենտ» ընկերության աշխատակիցները՝ գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանի գլխավորությամբ:

Դեպքի մասին տեղեկանալով՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հանձնարարականով ժամանել են նաեւ մարզպետարանի աշխատակիցները:

Տեղում պարեկները սահմանազատել են տարածքը, ժամանակավոր դադարեցրել են տրանսպորտային միջոցների տեղաշարժը, իսկ «Ճանապարհային դեպարտամենտ»-ը եւ ճանապարհը սպասարկող ճանշինականները բավականին օպերատիվորեն, կարճ ժամանակում հատուկ տեխնիկաների գործադրմամբ ձնահյուսքից թափված մի քանի տոննա ձյունը հեռացրել են ճանապարհից:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Սեւանի թիվ 30, 32 եւ Տավուշի թիվ 57 հրշեջ փրկարարական ջոկատներից 1-ական մարտական հաշվարկ:

Ընդհանուր առմամբ փակվել էր մոտ 100 մ երկարությամբ ճանապարհ, ձյան բարձրությունն էլ հասնում էր մոտ 2-2,5 մ: Սկզբից նաեւ տեղեկություններ կային, որ հնարավոր է՝ ձնահյուսի տակ ավտոմեքենաներ լինեն. բարեբախտաբար տեղեկությունը հերքվեց: Արդեն երթեւեկությունը նշված հատվածում, շնորհիվ «Ճանապարհային դեպարտամենտ»-ի, ճանապարհն սպասարկող ճանշինի, ՊԾ Գեղարքունիքի մարզի պարեկների, Սեւանի եւ Դիլիջանի փրկարարների վերականգնվել է:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

ՀՀ ՊՆ ՌՈ Գորիսի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ փետրվարի 6-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի կացարանին կից տեղադրված տնակում հրդեհ է բռնկվել: Դիրքի անձնակազմի կողմից կրակը մարելուց հետո այնտեղ հայտնաբերվել է պահեստազորային, տվյալ դիրքում մարտական հերթապահություն իրականացնող 39-ամյա Արթուր Վարուժանի Գրիգորյանի այրված դին:

Ստացված հաղորդման առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ՋԲԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Ձեւավորվել է քննչական խումբ: Նախաքննության շրջանակներում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում վերցվել են նմուշներ:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, ինչպես նաեւ դատահրդեհատեխնիկական փորձաքննություններ:

Ձեռնարկվում են անհրաժեշտ եւ անհետաձգելի քննչական եւ վարութային այլ գործողություններ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ

ArmLur.am-ը գրել էր, որ ՔՊ խմբակցությունը երեկ առավոտյան ներկայացրել է էկոնոմիկայի նախարարության աղմկահարույց բացահայտումների գործով կալանավորվածներին ազատ արձակելու երաշխավորությունը:

ArmLur.am-ը կապ հաստատեց «Լուսավոր Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ դիրքորոշում ունի տվյալ հարցի վերաբերյալ. «Ես չեմ կարծում, որ որեւէ հակաօրինական բան կա ստորագրահավաք իրականացնելու մեջ, որովհետեւ պատգամավորը իրավունք ունի երաշխավորություն տալ յուրաքանչյուր կալանավորվածի համար, եթե գտնում են, որ կան բավարար հիմքեր, այսինքն՝ արժանի են համարում դրան»:

Իսկ, ահա, իրավապաշտպան Էդգար Խաչատրյանի խոսքով՝ այդպես չպետք է անեին. դա հակասում է գոյություն ունեցող իրավական նորմին:

Հիշեցնենք, որ 71-հոգանոց ՔՊ ֆրակցիայից 5 հոգի չեն միացել քվեարկությանը, նրանցից մի քանիսը վատառողջ են եղել, իսկ երկուսը՝ Արսեն Թորոսյանն ու Հռիփսիմե Գրիգորյանն էլ գտնվում են գործուղման մեջ:

«ԳՆԱՄ «ԴՎԻԺՈԿԸ» ՄԻԱՑՆԵՄ»

ArmLur.am-ին ՊՆ N զորամասի կացարանին կից տնակում բռնկված հրդեհի դեպքից, որը խլեց զինվորի կյանք, մանրամասներ են հայտնի դարձել:

Եվ այսպես, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ 39-ամյա Արթուր Գրիգորյանը գնացել է կացարանի կից տնակ, որտեղ տեղադրված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, փայտ, վառելանյութ եւ այլ անհրաժեշտ իրեր: Վերջինս ասել է՝ գնամ «դվիժոկը» միացնեմ, որպեսզի խմբի անդամները կարողանան հեռախոսները լիցքավորեն, ու գնալով այնտեղ՝ միանգամից տնակում հրդեհը բռնկվել է:

Մեզ հայտնի դարձավ, որ իրավապահներին դեպքի մասին այսպես են պատմել նրա հետ ծառայության մեջ գտնվող զինվորները:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները տարբեր վարկածներ են քննում, մասնավորապես՝ միջանձնային հնարավոր խնդիրներ կամ այլ պատճառներ, որոնք կարող էին դեպքի պատճառ դառնալ:

Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ 39-ամյա Արթուր Գրիգորյանն ամուսնացած չէր, նա փետրվարի 2-ին էր մեկնել վարժական հավաքների, ու ընդամենը 5-օր էր, ինչ գնացել էր վարժական հավաքի, երբ նրա հետ նման ողբերգական դեպք կատարվեց:

Հիշեցնենք, որ փետրվարի 6-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի կացարանին կից տեղադրված տնակում դեռ—ս չպարզված հանգամանքներում բռնկված հրդեհի հետեւանքով մահացել է պահեստազորային Արթուր Վարուժանի Գրիգորյանը (ծնված 1985 թ.):

Հրդեհը մեկուսացվել եւ մարվել է:

Այլ տուժածներ չկան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 71 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԲՅՈՒՋԵՆ ՏՈՒԺԵԼ Է

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող՝ Դիլիջանում 2800 քմ հողամասը շուկայականից ցածր գներով, առանց աճուրդի, ուղղակի վաճառքով օտարելու մասին, որի հետեւանքով համայնքի բյուջե չեն մտել բազում միլիոն դրամներ: Դիլիջանի Թբիլիսյան խճուղու թիվ 91 հասցեի 6500 քառակուսի մետր հասարակական կառուցապատման հողամասը պատկանում է Եվա Իսկանդարյանին: Վերջինս դիմել է Դիլիջանի համայնքի ղեկավարին՝նշված հողամասին կից, Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղու թիվ 91/1 հասցեի 2508.8քմ հողամասը ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձեւով իրեն օտարելու խնդրանքով: Համայնքի ավագանին 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 552-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված 2508.8քմ հողամասն ընդլայնման կարգով Ե. Իսկանդարյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Փետրվարի 6-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղու թիվ 91 հասցեի 6500.0քմ հողամասին կից գտնվող, Թբիլիսյան խճ թիվ 91/1 հասցեի 2508.8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձեւով (ընդլայնման կարգով) օտարել քաղաքացի Եվա Իսկանդարյանին (հողամասի արժեքը՝ 17145892 դրամ), Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղու թիվ 91 հասցեի 6500.0քմ հողամասի եւ Թբիլիսյան խճուղու թիվ 91/1 հասցեի 2508.8քմ մակերեսներով հողամասերի միավորման արդյունքում առաջացած 9008.8քմ հողամասը հասցեակոչել Դիլիջան քաղաք, Թբիլիսյան խճուղու թիվ 91 հասցեով: Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղում 2500 քմ հողամասի շուկայական գինը մի քանի անգամ գերազանցում է Եվա Իսկանդարյանի վճարած 17 միլիոն դրամը:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Հովհաննես Նազոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՊՆ սահմանապահ զորամասի ականանետային դիվիզիոնի 3-րդ ականանետային մարտկոցի կառավարման դասակի հաշվարկող, կոչումով շարքային, 2022թ. մայիսի 14-ին՝ ժամը 12.00-ի սահմաններում, նույն զորամասի պահեստանոցում ապօրինի կերպով իրացրել է իր մոտ գտնվող՝ կաննաբինոիդների խմբին պատկանող թմրանյութը, այն է՝ հյուրասիրել է նույն զորամասի զինծառայող, շարքային Ջիվան Մանուկյանին, ինչից հետո վերջինիս հետ նույն պահեստանոցում ծխելու եղանակով օգտագործել են թմրանյութը: Հ. Նազոյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասով եւ 364.2 հոդվածի 2-րդ մասով, Ջ. Մանուկյանին՝ 364.2 հոդվածի 2-րդ մասով: Սույն քրեական գործով դատավարությունն ընթանում է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տավուշ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ ԿԱ

Հայկական հարուստ ճարտարապետական ժառանգության պահպանման, հանրահռչակման եւ վերականգնման նպատակով ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մեկնարկել է «ճարտարապետական ժառանգության վերականգնում» մասնագիտություն մագիստրոսական ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել է Նեղուցի վանքն իր վիմագրություններով՝ բացահայտելու այդ շենքի հորինվածքը եւ հնագիտական շերտերը:

ՃՇՀԱՀ ճարտարապետության տեսության պատմության եւ ժառանգության ամբիոնի վարիչ Էմմա Հարությունյանն ընդգծեց՝ թվային նորագույն տեխնոլոգիաների եւ մեթոդների ներմուծման, ճարտարապետական ժառանգության վերականգնման համաշխարհային լավագույն փորձի կիրառման անհրաժեշտության պայմաններում երիտասարդ վերականգնող ճարտարապետների մեծ պահանջարկ կա:

«Հայկական հարուստ ճարտարապետական ժառանգության պահպանման, հանրահռչակման եւ վերականգնման ոլորտը ներկայումս առերեսվում է լուրջ մարտահրավերների: ՃՇՀԱՀ-ն իր՝ ավելի քան հարյուրամյա գործունեության ընթացքում հեղինակավոր դարբնոց է դարձել ճարտարապետական կրթության համար, սակայն ճարտարապետական ժառանգության վերականգնման առանձին մասնագիտություն չի ունեցել: Որոշակի ժամանակաշրջանում թողարկվել են վերականգնող ճարտարապետների մասնագիտացում ունեցողներ, որոնք էլ ներկայումս վերականգնման նախագծերն են իրականացնում: Սակայն այդ մասնագետների միջին տարիքը 60 է: Երիտասարդ մասնագետների մուտքը ոլորտ կխթանի նաեւ հայկական ճարտարապետական ժառանգության գիտական հետազոտությունները եւ հրապարակումները»,-նշեց Հարությունյանը:

Ներկայումս համալսարանում «Ճարտարապետություն» մասնագիտության ներքո գործում է «Ճարտարապետություն» կրթական ծրագիրը, որը սահմանափակում է ճարտարապետական ժառանգության վերականգնման ոլորտի առջեւ ծառացած խնդիրների լիարժեք լուծման հնարավորությունները: Հարությունյանի խոսքով՝ դրանից զատ, դեռեւս Հայաստանի անկախացման տարիներին լուծարվել է «Հայնախագիծռեստավրացիա» նախագծային ինստիտուտը, որտեղ երիտասարդ ճարտարապետները հնարավորություն ունեին մասնագիտանալու հուշարձանների վերականգնման ոլորտում: Ամենադժվար տարիները հաղթահարելուց հետո պետական մարմինները վերսկսեցին հուշարձանների միայն շատ փոքր մասի ամրակայման եւ վերականգնման աշխատանքներ, որն էլ, Հարությունյանի դիտարկմամբ, պատճառն է, որ վերջին 30 տարում չեն կարողացել միջսերնդային փոխանակում ապահովել հուշարձանների պահպանությամբ զբաղվող մասնագետների միջեւ:

«Կրթական ծրագրի կառուցվածքը մյուս կրթական ծրագրերից խիստ տարբերվում է: Այն համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահանջներին: Ներգրավում ենք փորձառու դասախոսներին: Ունենք հրավիրյալ դասախոսներ արտերկրից: Ուսանողների համար նախատեսվում է արտասահմանյան պրակտիկա. պետք է գնան սովորեն, աշխատեն դրսում: Փորձել ենք առավելագույնս մոտեցնել իրական կյանքի պահանջներին, ինչը կպահանջվի ռեստավրատոր աշխատելու համար»,-ասաց նա:

Հարությունյանը նշեց՝ այս կիսամյակում հետազոտական շատ աշխատանքներ են արվել՝ ուսումնասիրել են Նեղուցի վանքը այնպես, ինչպես իրական ռեստավրացիոն աշխատանքներն են արվում:

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, վիմագրության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Հարությունյանն էլ ընդգծեց՝ կրկնակի ողջունելի է, որ նմանատիպ ծրագրում ներառվել է նաեւ այնպիսի մի մասնագիտություն, առարկա, որն ուսումնասիրում է միջնադարյան, քարեղեն գրավոր մշակույթը, այն է՝ վիմագրագիտությունը: Նրա դիտարկմամբ՝ առարկան հատուկ ուսումնասիրության կիզակետում դնելը կարեւոր էր:

«Եթե մենք ուսումնասիրում ենք միջնադարյան հուշարձանի պատմությունը, ճարտարապետությունը, հնագիտությունը, մշակութային շերտերի ուսումնասիրությունը, ապա այս համատեքստում պիտի հատուկ ուսումնասիրվի նաեւ մեր վիմագրական մշակույթը: Սա շատ կարեւոր հանգամանք է, որ միջնադարյան հուշարձանով զբաղվողը տիրապետի նաեւ այս տեսակ գիտելիքների»,-մանրամասնեց գիտաշխատողը:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հնագետ Աստղիկ Բաբաջանյանն էլ իր խոսքում նշեց՝ ընդհանուր առմամբ, հնագիտությունը եւ դասընթացը Հայաստանի հնագիտական ժառանգության, այդ թվում՝ ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության, պահպանման եւ վերականգնման շղթայում առաջնային օղակներից մեկն է, որը համապարփակ գիտելիքներ է տրամադրում հուշարձանների եւ դրանց շուրջ ձեւավորված պատմամշակութային միջավայրի վերաբերյալ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

«ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ-2024»

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգսյանի որոշմամբ՝ փետրվարի 1-ից Գեղարքունիքի մարզի համայնքներում եւ հանրակրթական դպրոցներում կազմակերպվում եւ անցկացվում է «Գեղարքունյաց ձմեռ-2024» մարզամշակութային միջոցառումը:

Միջոցառումն անցկացվում է ամեն տարի՝ բնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորման, համայնքներում ձմեռային մարզաձեւերի եւ ազգային խաղերի մասսայականացման նպատակով: Գեղարքունիքի մարզի մի շարք դպրոցներում եւ բնակավայրերում արդեն իսկ անցկացվել են միջոցառումները:

Ըստ կանոնակարգի՝ միջոցառման մեջ ընդգրկված են մասսայական դահուկավազքը, սահնակներով մրցումը, կշռաքարի բարձրացումը, մարզական ցուցադրական ելույթները, սպորտլանդիայի անցկացումը, բարձունքի գրավումը, ձնագնդիով նշանակետին հարվածելը, ազգային խաղաձեւերը, հրաձգությունը օդամղիչ հրացանից, ձմեռային վոլեյբոլը եւ այլ մարզախաղաձեւեր:

«Անցկացված միջոցառումներն ուղեկցվում են երգ ու պարով: «Գեղարքունյաց ձմեռ-2024» մարզամշակութային միջոցառումը կշարունակվի մինչեւ մարտի 1-ը: Կարեւորն այն է, որ, ի տարբերություն նախորդ մի քանի ձմեռների, այժմ մարզի տարածքով մեկ առկա է բավարար ձնածածկույթ, որը նպաստում է միջոցառումների բազմազանության ապահովմանը: Արդյունքների ամփոփումից հետո մրցումներում առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձինք եւ մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը կարժանանան խրախուսանքի»,-ներկայացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության գլխավոր մասնագետ Գեղամ Չարվադարյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 1 մարդ զոհվել է, 7-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՄԱՅՆՔ

ԿԱՑԱՐԱՆ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Երեւանի քաղաքապետարանն առաջիկայում թափառող շների մշտական խնամքի կացարան կկառուցի, որը նախատեսված կլինի մինչեւ 300 շան համար:

Այս մասին հայտնեց Երեւանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Հարություն Առաքելյանը՝ ընդգծելով, որ նոր կացարանում կենդանիները կանցնեն բժշկական ստուգում, կստերջացվեն, կպատվաստվեն եւ կլինեն կենդանաբույժների մշտական հսկողության տակ:

«Կացարանի նախագծման աշխատանքները առաջիկա մի քանի օրվա ընթացքում կավարտվեն, որից հետո կանցնենք շինարարության մրցույթին: Մրցույթի կայացումից հետո էլ կտանք շինարարական աշխատանքների մեկնարկը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ 2024 թվականին համայնքը կունենա թափառող շների համար նախատեսված առանձնացված կացարան, որը ապահովված կլինի անհրաժեշտ բոլոր պայմաններով: Ուզում եմ շեշտել, որ կացարանը լինելու է մի կառույց, որտեղ ապահովված են լինելու անհրաժեշտ բոլոր պայմանները»,- մանրամասնեց Հարություն Առաքելյանը՝ հավելելով, որ կացարանում շները վանդակներում չեն պահվելու, նրանց համար ազատ տեղաշարժվելու հնարավորություն կլինի:

Կենտրոնի տնօրենի խոսքով՝ 2024 թվականին նաեւ մեծ ուշադրություն են դարձնելու շներին խնամակալության հանձնելու գործընթացին, քանի որ կենտրոնի ամենօրյա աշխատանքը ցույց է տալիս, որ շատ են շների հանդեպ անպատասխանատու վարքագիծ դրսեւորողները, որոնք մի քանի ամիս շուն պահելուց հետո հրաժարվում են կենդանուց՝նրան թողնելով փողոցում:

Հարություն Առաքելյանը կարծում է, որ թափառող կենդանիների հետ կապված խնդիրները շատ են, որովհետեւ ոլորտում որեւէ հստակ կարգավորում չկա. նա օրենսդրական կարգավորումների բացը լրացնելու կարիք է տեսնում:

«Շատ հանդիպումներ ենք ունեցել Ազգային ժողովի մեր գործընկերների հետ. այժմ կա նախագիծ կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին, որով, կարելի է ասել, մեծ մասամբ կկարողանանք կանոնակարգել ոլորտը, ինչպես նաեւ կսահմանվի համապատասխան տուգանքի չափ բոլոր նրանց համար, որոնք կարգը կխախտեն»,-ասաց Առաքելյանը:

Խնամքի կենտրոնում այժմ գործում է կլինիկական բլոկ՝ նախատեսված թափառող կենդանիների համար:

Երեւանում կենդանիների մշտական խնամքի հիմնական կացարանի կառուցումից հետո կենտրոնը մի քանի մեծ վարչական շրջաններում եւս նախատեսում է ունենալ նման կացարաններ, որտեղ եւս կկարողանան պահել եւ խնամել թափառող շներին:

2023 թվականի ընթացքում կենտրոնի կլինիկա է բերվել 3436 շուն, ստերջացվել եւ կատաղության դեմ պատվաստվել է 2045 շուն, իսկ կատաղության դեմ վերապատվաստվել է 753 շուն: Քնեցված եւ անկած կենդանիների թիվը 2023-ին եղել է 603, տարիքով պայմանավորված չի ստերջացվել 35 շուն, իսկ որդեգրման է հանձնվել 104 շուն: Մայրաքաղաքի փողոցներից հավաքվել է 467 անկած կենդանու դի:

ՆԱԽԱԳԻԾ

ԿՈՒՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ՝ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

Հայաստանի Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հեղինակած՝ ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ օրենքի նախագիծը: Մինչեւ ընդունումն այն բուռն քննարկման առիթ դարձավ, ընդդիմադիր պատգամավորները դեմ արտահայտվեցին նախագծին՝ մատնանշելով նաեւ իրավական որոշակիության խնդիրներ, իշխող խմբակցությունից վստահեցրին, որ այն ընտանեկան բռնության կանխարգելման ուղղությամբ կարեւոր նախագիծ է:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց այն հեղինակած Զարուհի Բաթոյանը:

Ըստ պատգամավորի՝ փաթեթի նպատակն է բարձրացնել ընտանեկան բռնության կանխարգելման եւ բռնության ենթարկված անձանց պաշտպանության արդյունավետությունը: Ըստ առաջարկի՝ օրենքը վերանվանվում է «Ընտանիքում եւ կենցաղային բռնության կանխարգելման, ընտանիքում եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք: Նախատեսվում է հստակեցնել առկա սահմանումները, դրանք համապատասխանեցնել Քրեական օրենսգրքի սահմանումներին, լրացնել նոր սահմանումներով: «Առաջարկվում է օրենքով որպես բռնության ենթարկված անձ դիտարկել նաեւ երեխային, վերանայել անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշման ժամկետները, առաջնային բուժօգնության փոխարեն օրենքով սահմանել ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում»,-ասաց Բաթոյանը:

Նախագծով առաջարկվում է վերանայել Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների ծանրացնող հիմքերը՝ մասնավորապես ներառելով սեռով պայմանավորված հիմքը, ինչպես նաեւ արարքը՝ մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարած լինելու փաստը:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմենուհի Կյուրեղյանը իրավական որոշակիության առումով որոշակի խնդիրներ է նկատել նախագծում: Ըստ պատգամավորի՝ նախագծի ամենակարեւոր բաղադրիչներից է «զուգընկեր» գաղափարի ներմուծումն օրենքի մեջ: Կյուրեղյանը մեջբերում կատարեց նախագծից. «Զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից»:

Պատգամավորը հարցրեց, թե ինչ է նշանակում այդ սահմանումը՝ մատնանշելով իրավական որոշակիության խնդրի մասին: Զարուհի Բաթոյանը պատասխանեց, որ դա երկար քննարկված հարցերից է, դեռ քննարկման ենթակա, կարեւորում են նաեւ պատգամավորների դիտարկումները:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը ներկայացրեց, թե ինչու են նախագծում տվել «զուգընկեր» բառի սահմանումը: «Իրավապահ համակարգից մեզ եկավ ազդակ, որ, երբ մտնում են տուն ու ուզում են պաշտպանության տակ առնել բռնության ենթարկված անձին, ԶԱԳՍ-ի թղթի բացակայության պարագայում, ցավոք, այդ կանայք պաշտպանության տակ չեն կարողացել առնվել, որովհետեւ «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» օրենքը նախատեսում է, որ պարտադիր է ամուսնության վկայականը: Նշանվածները, պարզապես ընկերները, որոնց մեջ առկա է սիրային կապը, մեր պաշտպանության ներքո են լինելու այսուհետ: Այս նախագիծն ունի կանխարգելման շատ կարեւոր բաղադրիչ»,-ասաց պատգամավորը՝ նշելով, որ նախորդ տարի 14 կին է մահացել ընտանիքում տեղի ունեցած բռնության հետեւանքով:

Նախագծով բռնության տեսակ է համարվում նաեւ կուսության ստուգումը:

«Դուք ֆիքսում եք կուսության ստուգումը որպես հանցագործություն եւ դրա համար նախատեսում պատժամիջոց: Ես որեւէ կերպ դա չեմ կարող ընդունել որպես դրական գործողություն: Բայց դա նաեւ շատ խիստ մշակութային խնդիր է: Բայց ինձ կրկին հետաքրքրում է իրավական որոշակիությունը: Դատապաշտպանը ինչպե՞ս պետք է ապացուցի, որ չի կատարվել կուսության ստուգում, ի՞նչ մեխանիզմներ են աշխատելու»,- հարցրեց Արմենուհի Կյուրեղյանը:

Հարակից զեկուցող Տիգրան Պարսիլյանը պատասխանեց՝ թե ինչպես դատապաշտպանը պետք է ապացուցի, ավելի շատ նրա խնդիրն է, իրենք գործիքն են տալիս:

Նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունվեց՝ ստանալով 63 կողմ, 32 դեմ, 1 ձեռնպահ ձայներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻԱ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հայաստանի մշտական բնակչությունը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2 մլն 990.9 հազար մարդ է: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մշտական բնակչության թիվն ավելացել է 53.4 հազարով:

ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացրած տվյալներից հետեւում է, որ 2023-ի հունվար-դեկտեմբերին ՀՀ բնակչության թվաքանակի փոփոխության առաջնային բաղադրիչը եղել է միգրացիոն մնացորդը: Նախնական տվյալներով՝ մինչեւ 2024-ի հունվարի 1-ը ներառյալ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությունից ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառվել է 41.4 հազար մարդ: Մինչդեռ, բնակչության բնական հավելաճը (ծնվածների եւ մահացածների թվի տարբերությունը) 2023-ին կազմել է ընդամենը 12 հազար մարդ:

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ երկրի 71 համայնքների 49 քաղաքներում բնակվում է 1 մլն 915.3, իսկ 953 գյուղերում՝ 1 մլն 075.6 մարդ: Ընդ որում՝ մայրաքաղաքն ունի 1 մլն 104.2 հազար բնակիչ: Հաշվետու ժամանակաշրջանում Երեւանի բնակչության աճը 15.6 հազար մարդ է:

Մարզերից բնակչության թվով անվիճելի առաջատարն է Կոտայքը (278 հազար մարդ), որին հաջորդում են Արմավիրը (259.4), Արարատը (255.8), Շիրակը (237.9), Լոռին (225.3), Գեղարքունիքը (213.2), Արագածոտնը (131.5), Սյունիքը (119.5), Տավուշը (117.1) եւ Վայոց ձորը (49):

Անցած մեկ տարում բնակչության ամենամեծ աճը գրանցվել է Կոտայքում (7.3 հազար մարդ), ամենացածր ցուցանիշը Վայոց ձորում է (1.6): Մարզերից քաղաքային բնակչության ամենամեծ աճը Կոտայքում է (4.7 հազար մարդ), ամենաքիչը՝ Շիրակում (1.1): Գյուղական բնակավայրերում բնակչության ամենամեծ աճը գրանցվել է Արմավիրում եւ Կոտայքում՝ 2600-ական մարդ, ամենացածր թիվը՝ Վայոց ձորում եւ Տավուշում՝ 300-ական:

2023 թվականից սկսած՝ բնակչության թվի ընթացիկ հաշվառումն իրականացվում է 2022թ. մարդահամարի արդյունքների հիման վրա:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ 2022 թվականին կորել է Պետական որակավորող հանձնաժողովի կողմից 2008 թվականի հուլիսի 02-ի շնորհված՝ AK N 065375 դիպլոմը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԹԱՏՐՈՆ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԻ ՀԵՏ ՈՉ ՄԻ ԱՆԵԼԻՔ ՉՈՒՆԵՄ»

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը, փետրվարի 7-ին լրագրողների հետ հանդիպմանը անդրադառնալով «Գոյ» թատրոնի թատերախմբի հետ աշխատելուն, հայտարարեց, որ ինքը «Գոյ» թատրոնի հետ ոչ մի անելիք չունի: Ըստ նրա՝ գուցե լինի մի դերասան, որին առաջարկի, օրինակ, Չեխովյան Համլետ խաղալ, սակայն չի կարծում, որ թատերախմբի հետ որպես «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար պետք է աշխատի:



«Ես առանձնազրույց եմ ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախկին փոխնախարարի հետ, ներկայիս փոխնախարարի հետ, խոսել եմ մեր տնօրենի հետ այդ հարցի շուրջ, որովհետեւ եթե ինչ-որ միավոր միանում է քո միավորին, պետք է հասկանաս, թե որպես գեղարվեստական ղեկավար ինչ գործառույթ ես իրականացնելու: Ես հայտարարում եմ, որ «Գոյ» թատրոնի հետ ոչ մի անելիք չունեմ: Կարծում եմ՝ «Գոյ» թատրոնը ինչպես այդտեղ աշխատել է, նույն կերպ աշխատելու է, ուղղակի փոխվում է կառավարման մոդելը»,- հավաստիացրեց Արմեն Էլբակյանը:

Նրա խոսքով՝ Սունդուկյանի անվան թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանի հետ համատեղ աշխատանքի ընթացքում չի պատահել, որ որեւէ ռեժիսոր կամ ինքը որեւէ պիես առաջարկի բեմադրել, ու պարզվի, որ թատրոնի քաղաքականությունը թույլ չի տալիս դա անել: Բեմադրվել են բազմաթիվ պիեսներ, որոնք քաղաքական են: Դրանցից են «Արթուրո Ուիի կարիերան, որ պետք է կանխվեր», «Մեծապատիվ մուրացկաններ»-ը եւ այլն:

Էլբակյանը նշեց՝ իր սիրտը շատ է ցավել, երբ լուծարվել է Փոսի թատրոնը, քանի որ Հրաչյա Ղազարյանը, բահն ու կացինը ձեռքին, այն կառուցել է եւ այնտեղ աշխատելու է հրավիրել նաեւ Էլբակյանին, որը որպես ռեժիսոր եւ դերասան այդ ընթացքում ծանրաբեռնված աշխատել է Մայր թատրոնում, սակայն Փոսի թատրոնում բեմադրություն եւս արել է:

«Այն ժամանակ նաեւ Խամաճիկների թատրոնի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարն էի եւ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հետ խոսել եմ այն մասին, որ չլուծարվի թատրոնը: Փոսի թատրոնը լուծարվեց, եւ հաստիքները տրվեցին «Գոյ» թատրոնին, որը դարձավ պետական: Փոսի թատրոնի դերասաններն ինձ մոտ եկել են, եւ նրանց ներկայացումներից մեկը՝ «Բաղդասար ախպար»-ը, որ ես էի բեմադրել, բերեցի Խամաճիկների թատրոն: Փոսի թատրոնը փակեցին, «Գոյ»-ը պետական դարձրին»,-հիշեց Արմեն Էլբակյանը:

Արմեն Էլբակյանը հիշեցրեց, որ տարիներ առաջ էլ ինքն է հիմնադրել «Էդգար Էլբակյան» ոչ պետական թատրոնը, որը երկար ժամանակ աշխատել է եւ մոտ քսան անուն ներկայացում է ունեցել խաղացանկում: «Ինձ մի քանի անգամ առաջարկել են պետականացնել թատրոնը: Ես այն որպես պետական միավոր չեմ տեսել եւ չեմ համաձայնել, որովհետեւ այն ինձ համար վայր էր, որտեղ ազատ իմ ուզած մարդկանց հետ աշխատում էի: Երբ մարդը մտնում է ազատ մտածողության մեջ, չպետք է աշխատի պետական կառուցվածքում, եւ այդ դեպքում թատրոնը չի կորցնում իր գեղարվեստական մտածողությունը»,-ընդգծեց Արմեն Էլբակյանն ու հավելեց՝ երբ թատրոնը բարձրացնում է հարցեր, որոնք անհանգստացնում են հասարակությանը, հասարակությունը հասկանում է, որ մենակ չէ:

Ռեժիսորը վստահ է՝ թատրոնը, գրականությունը մտածելու առիթ են տալիս մարդուն, թե ով է ինքը, ինչու է ծնվել, որն է նրա ապրելու նպատակը, որոնք են նրա քաղաքացիական դիրքորոշումն ու երազանքը: «Կապ չունի այդ թատերախաղն այսօր է գրված, թե երեկ, որովհետեւ այստեղ շատ կարեւոր են այն տարածությունն ու ժամանակը, որում մենք ապրում ենք, քանի որ այն ամենը, ինչ կատարվում է բեմի վրա, կատարվում է այստեղ, այսօր, հենց հիմա երկնքի ու երկրի միջեւ»,-եզրափակեց Արմեն Էլբակյանը:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԴԱՍԱՐԱՆ+ԴԱՍԱԿԱՆ»

ԿԸՆԴԼԱՅՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը մարտին կմեկնարկի «Դասարան+դասական» կրթական ծրագիրը, իսկ ամռանը թատրոնը կունենա նոր հարթակ. որպես «Artbox Hub» ծրագրի հաղթող թատրոնն է՛լ ավելի կընդլայնի իր ստեղծագործական գործունեությունը, կդառնա մշակութային հաբ, որով կնպաստի երիտասարդ, ազատ արվեստագետների եւ հանրության շփմանը:

Այս մասին փետրվարի 7-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը:

Խոսելով 2023 թվականի նվաճումների մասին՝ նա շեշտեց՝ ներկայացումների առումով բավականին լավ ցուցանիշ ունեն: «2023 թվականին խաղացել ենք 137 ներկայացում, ունեցել ենք ավելի քան 70 հազար 300 հանդիսատես, ձեւավորել ենք երկու հարյուր միլիոնից ավելի արտաբյուջետային միջոցներ, գեներացրել ենք այդ միջոցները եւ արել ենք բազմաթիվ աշխատանքներ»,-ասաց տնօրենը:

Նա հիշեցրեց՝ նախորդ տարվա մարտին թատրոնում մեկնարկել էր «Ազգային թատերական դպրոց» միջազգային նախագիծը: Հայաստանի մշակույթի եւ արվեստի ավելի քան 30 երիտասարդ մասնագետներ մասնակցել են «Կառավարման հիմունքները ժամանակակից ազգային թատրոնում» թեմայով եռօրյա կրթական ինտենսիվ ծրագրին, որը մշակել եւ ներկայացրել են Ռուսաստանի ազգային դրամատիկական թատրոնը, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանը եւ Բեմական արվեստի ռուսաստանյան պետական ինստիտուտը:

Մայիսին թատրոնը մասնակցել է Գյումրու միջազգային թատերական փառատոնին՝ «Ռեկամերոն» ներկայացմամբ, հունիսին Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի եւ Ռուսաստանի ազգային դրամատիկական թատրոնի (Ալեքսանդրինյան թատրոն) միջեւ կնքվել է համագործակցության հուշագիր, որը հիմք է դարձել համատեղ նոր ծրագրերի իրագործման համար, իսկ հուլիսին իրականացվել է «Դասարան+դասական» կրթական ծրագիրը, որին մասնակցել է 70 աշակերտ Երեւանից եւ ՀՀ մարզերից:

Սեպտեմբերին թատրոնը հյուրախաղերով է հանդես եկել Սանկտ Պետերբուրգում: Ալեքսանդրինյան թատրոնի պատմական բեմում ներկայացվել է «Թռիչք կկվի բնի վրայով» ներկայացումը, իսկ Նոր բեմում՝ «Ռեկամերոն»-ը: Հյուրախաղերի ընթացքում թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը վարպետության դաս է անցկացրել ուսանողների եւ թատերասեր հանրության համար:

Հոկտեմբերին թատրոնը «Իշամեղու» ներկայացմամբ մասնակցել է Լեհաստանի Բելոստոկ քաղաքի միջազգային թատերական փառատոնին, իսկ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացվել է Երեւանյան միջազգային թատերական փառատոնը:

Թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը փաստում է. «Թատրոնի գործունեությունը բազմաբեւեռ է եւ ուղղված է ընդհանուր թատերական դաշտի ակտիվացմանը, ազգային եւ միջազգային երկխոսությանը, երիտասարդների մշակութային կրթությանը: Ասվածին վկայություն կարող են լինել ինչպես «Ազգային դպրոց» միջազգային նախագիծը, «Դասարան+դասական» կրթական նախագիծը», Երեւանյան միջազգային թատերական փառատոնը, այնպես էլ մյուս նախաձեռնություններն ու համագործակցային ծրագրերը»:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՁԵՎԱՉԱՓԸ ԿՓՈՓՈԽՎԻ

Հայաստանի «Տարվա 10 լավագույն մարզիկներ»-ի ընտրության ձեւաչափը ամբողջությամբ կփոփոխվի:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված քննարկման ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը ներկա մարզական լրագրողներին ներկայացրեց հնարավոր նոր ձեւաչափն ու ընդգծեց՝ լավագույնների ընտրության վերջնական ձեւաչափը հայտնի կլինի առաջիկա շաբաթների ընթացքում: Մարզական լրագրողներն ազատ են իրենց կարծիքներն առաջարկելու լավագույններին ընտրելու հարցում:

Նախնական տարբերակներում կլինեն՝ «Լավագույն մարզիկ», «Լավագույն մարզուհի» (կլինեն 3-ական մարզիկներ), «Լավագույն թիմ», «Լավագույն մարզիչ», «Լավագույն երիտասարդ մարզիկ», «Տարվա վերադարձ», «Հաշմանդամային սպորտի լավագույն մարզիկ», «Հանդիսատեսի համակրանք» (կորոշվի SMS քվեարկությամբ) անվանակարգերը:

Մեծ է հավանականությունը, որը լավագույնների ընտրություններն այսուհետ կլինեն հունվարին:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

Հայաստանի բասկետբոլի հավաքականն ամռանը ընկերական մրցաշարի կմասնակցի ԱՄՆ-ում: Այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: Հայաստանի ազգային հավաքականը հունիսի 21-23-ը կմասնակցի ընկերական մրցաշարի Լոս Անջելեսում: Մրցակից երկրներն են Իռլանդիան եւ Գվատեմալան: Այլ մանրամասները դեռեւս հայտնի չեն: Հայաստանի բասկետբոլի ազգային հավաքականը 2024 թվականի փետրվարին մեկնարկելու է աշխարհի 2027 թվականի առաջնության նախընտրական առաջին փուլում: Շ ենթախմբում Հայաստանի հավաքականի մրցակիցները լինելու են Ավստրիայի եւ Ալբանիայի թիմերը (22.02.2024 Ավստրիա-Հայաստան, 25.02.2024 Հայաստան-Ալբանիա, 24.11.2024 Հայաստան-Ավստրիա, 20.02.2025 Ալբանիա-Հայաստան): Աշխարհի առաջնության նախընտրական փուլին մասնակցում է 10 հավաքական՝ ընդգրկված 3 ենթախմբերում: Հաջորդ փուլի ուղեգիր կնվաճեն ենթախմբերում առաջին հորիզոնականը զբաղեցրած թիմերը եւ երկրորդ հորիզոնականում հայտնված լավագույն արդյունքով հավաքականը:

ՊԱՀԱՆՋԵԼ Է

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 25-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն Մադրիդի «Ռեալից» պահանջել է տարեկան 50 միլիոն եվրո աշխատավարձ, նաեւ 120 միլիոն եվրո՝ազատ գործակալի կարգավիճակում պայմանագիր կնքելու համար. հաղորդում է El Larguero-ն: Մբապեի պայմանագիրը փարիզյան ակումբի հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը:

Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն ՊՍԺ-ի հետ մասնակցել է 28 հանդիպման, խփել է 29 գոլ, կատարել 7 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Մբապեի տրանսֆերային արժեքը գնահատում է 180 միլիոն եվրո:

● *Փետրվարի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Յ. Ս. Բախ. «Սի մինոր Մեսսա»» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-15000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Կնքել եմ վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունների ապահովման համար գրավադրել եմ իմ գույքը: Վճարումները չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում ի՞նչ հետևանքներ կարող են լինել:

Իրինա Մելքոնյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկի մարման եւ տոկոսների վճարման պարտականությունը չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում վարկը դասակարգվում է՝ դառնալով ժամկետանց, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տույժեր: Պայմանագրում տույժերի վերաբերյալ դրույթներ նախատեսված չլինելու դեպքում տոկոսները հաշվարկվում են կետանցի (ուշացման) օրվանից մինչեւ պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Եթե իրացման արդյունքում ավելացել է գումար, ապա ֆինանսական կազմակերպությունը պետք է վերադարձնի Ձեզ այդ գումարը, իսկ եթե ստացված գումարը բավարար չէ վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար, ապա Դուք պատասխանատու եք վարկային պայմանագրից բխող պարտավորությունների համար Ձեզ պատկանող մնացած գույքով: Միայն գրավատուն հանձնված գույքի գրավի դեպքում է, որ գույքի իրացումից հետո գրավատունն իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է պահանջը լրիվ բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 255 հոդվածի 7-րդ կետ):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե վարկային պայմանագրի շրջանակներում առկա է գրավադրված գույք, ապա ֆինանսական կազմակերպությունը կարող է իրացնել գրավի առարկան եւ իրացման արդյունքում ստացված գումարը ուղղել վարկային պարտավորությունների կատարմանը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը:

Արմինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ հաշմանդամ ճանաչված անձը կրկին բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ: Անձի կամ նրա ներկայացուցչի դիմումով վերափորձաքննությունն իրականացվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման, իսկ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում՝ նաեւ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հանձնաժողովի նախագահը բժշկասոցիալական փորձաքննություն անցած անձի կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ հրապարակում է հանձնաժողովի որոշումը: Անձին հաշմանդամության սահմանման մասին հանձնաժողովի որոշումը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին կամ նրա ներկայացուցչին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտ, «Կարատե դո» ֆեդերացիայի սան Վարդան Աբրահամյանը 2023 թվականին չեմպիոնական չորս գոտի է նվաճել կարատե մարզաձեւի միջազգային մրցաշարում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 7 + 3 + 6
Կոտայքի լեռներ	0 - 2 + 3 + 6
Կոտայքի նախալեռներ	0 - 2 + 8 + 11
Գեղարքունիք	- 1 - 6 + 3 + 7
Լոռի	0 + 5 +12 + 16
Տավուշ	+ 3 + 7 +16 + 20
Արագածոտնի լեռներ	- 4 - 7 + 3 + 5
Արագածոտնի նախալեռներ	0 - 2 + 8 + 13

Արարատ	0 + 2 +13 + 15
Արմավիր	0 + 2 +12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 3 - 5 + 3 + 5
Վայոց ձորի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +16 + 20
Սյունիքի նախալեռներ	0 + 4 +10 + 15
ԼՂՀ	+ 2 + 4 +10 + 14
Երեւան	+ 6 + 9 +12 + 14

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*